Արձանագրություն N 2.1

«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 փետրվարի 2019թ. ժ. 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օսիկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Եփրիկյան, Ռ. Մուրադյան, Ա. Հայրապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մանուչարյան

1. **ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.**

1.1 ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետին համապատասխան՝ Կոմիտեի կողմից ստացվել է հարցման մասին տեղեկատվություն, որի արդյունքում պարզվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն, չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև բավարարում է հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանները:

1.2 «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, սակայն վերջինս չի ներկայացրել որևէ փաստաթուղթ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝**

2.1 Հիմք ընդունելով 1.2 կետը՝ մերժել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Յդկատ» ԱՊԸ-ին:

2.2 Փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

2.2 Էլեկտրոնային եղանակով Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային

փոստի հասցեներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

2.3 Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն հանձնաժողովի նիստի արձանագրությունը ներկայացնել ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Օսիկյան

Անդամներ՝ _____ Ա. Եփրիկյան

_____ Ռ. Մուրադյան

_____ Ա. Հայրապետյան

Քարտուղար՝ _____ Լ. Մանուչարյան